**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ**
**ԱՆԴԱՄ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ պարոն Մանուկյան,**

ի պատասխան Ձեր 08.04.2024թ. հ.13/04 գրության՝ տեղեկացվում է.

01.01.2024-31.03.2024թթ. ժամանակահատվածի համար այլ վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը «Ա» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է 3833, ամսական դրույքաչափով՝ 4141, օրական դրույքաչափով՝ 6687 վճարումներ, իսկ «Բ» գոտում կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է 4080, ամսական՝ 915, օրական՝ 1150 վճարում:

Մեկ ժամվա դրույքաչափին համապատասխան վճարումները կատարվում են և՛ «SMS» հաղորդագրությունների, և՛ այլ վճարային համակարգերի միջոցով, ինչպես նաև նույն փոխադրամիջոցների համար, որպես կանոն կատարվում են մեկից ավել անգամ վճարումներ, ուստի՝ ըստ ժամավճարի, ավտոմեքենաների քանակի վերաբերյալ տեղեկատվություն հնարավոր չէ տրամադրել, իսկ օպերատորների կողմից ըստ համապատասխան ժամանակահատվածների առանձնացված տեղեկատվություն տրամադրելուց հետո անհրաժեշտության դեպքում հնարավոր կլինի ըստ ժամավճարի վճարած գումարի չափի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն տրամադրել:

01.01.2023-31.03.2023թթ. ժամանակահատվածի համար այլ վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը կայանելու համար տարեկան դրույքաչափին համապատասխան առկա է 43100, ամսական դրույքաչափով՝ 7800 վճարում:

Ներկայացված տարեկան վճարումներում ներառվել են նաև 26.12.2022-31.12.2022թթ., 27.12.2023-31.12.2023թթ. ժամանակահատվածներում համապատասխան եկամտային հաշիվներին կատարված վճարումները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ